«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 40-1/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 05.04.2019թ. ժամը 14:30

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 20.02.2019թ-ին ստացված,«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ ,պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Ապրիլի 05-ին,14-00-ին ՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում,հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի հետաձգված նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Դիմումատու՝«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն
«Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչներ՝Հայկ Թունյանը և Անահիտ Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 20.02.2019թ-ին ստացված,«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ ՝
Մինչև օրակարգի հարցի քննարկման անցնելը հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը առաջարկության համար ձայն վերցրեց և ներկայացնելով այն փաստը,որ օրակարգում ընդգրկված է իր,որպես սնանկության գործով կառավարիչի՝ վարքագծերի վերաբերյալ հարցի քննարկում, ինքը որպես հանձնաժողովի անդամ ինքնաբացարկ է հայտարարում և առաջարկում է քվեարկությունը կազմարպել առանց իր ձայնի:
Նիստի մասնակից հանձնաժողովի անդամները քննարկեցին ինքնաբացարկը,ընդունեցին այն ճիշտ և նիստի վարման կանոնակարգին համապատասխան ու հարցը դրեցին քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը՝ ստուգեց նիստի մասնակիցների ինքնություն և կանոնակարգի համաձայն դիմում-բողոքը ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց՝«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝Անահիտ Գևորգյանին,ով ներկայացրեց դիմում-բողոքը և մասնավորեցրեց,որ կառավարչի գործողությունները վճարման ժամկետների մասին կնքված պայմանագրի հետ կապված, չէն համապատասխանում օրենքներին և դրանով կառավարիչը թույլ է տվել կարգապահական խախտում,որի համար իրենք կարծում են,որ կառավարիչը պետք է ենթարկվի համապատասխան պատասխանատվության:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը հարց ուղղեց դիմումատուի ներկայացուցչին առ այն,որ իրենք ծանոթացել են արդյոք կառավարչի առարկություններին և Դատարանի 13.02.2019թ-ի որոշմանը:Ներկայացուցիչը պատասխանեց,որ առարկություններին ընդհանուր առմամբ ծանոթ են,մասնավորապես այս դիմումին ներկայացված առարկությանը ծանոթացան արդեն,ծանոթ են նաև դատարանի՝ հիշատակված որոշմանը,որին իրենց առարկությունները կներկայացնեն օրենքով սահմանված կարգով:

Իր առարկությունները ներկայացնելու համար Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնի իրավունք տվեց՝«Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանին ով ներկայացրեց առարկությունները և մասնավորեցրեց ՀՀ Սնանկության դատարանի 13.02.2019թ-ի ԵՇԴ/0046/04/13 որոշմամբ հաստատված այն փաստը,որ,

-Ինչ վերաբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ,453-րդ,454-րդ և 459-րդ հոդվածների,Սնանկության մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի վկայակոչմանը,աճուրդի պայմաններում չներառված պայմանով պայմանագրի կնքմանը,ապա հարկ է ևս մեկ անգամ նշել,որ պայմանագրի գնի վճարման ժամկետը պայմանագրի էական պայման չի հանդիսանում և դրա չներառելը աճուրդի պայմաններում իրավաչափ է:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը նշեց,որ ներկայացված դիմումից պարզ է դառնում,որ դիմումատուն հիմնականում հիմք վերցնելով «Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի վերջին «...,ինչպես նաև էական այլ պայմաններ» բառակապակցությունը,ըստ դրա արդեն հղում է կատարում՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 502-րդ հոդվածի 2-րդ մասին և արդեն լոտի գնի վճարման ժամկետ սահմանելով ըստ օրենսգրքի և դա համարելով «Էական» պայման:

Հանձնաժողովի նախագահն պարզաբանեց,որ այս դեպքում դիմումատուն ճիշտ չի մեկնաբանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 502-րդ հոդվածը,քանի որ նրա առաջին մասով

-1.Գնորդը պարտավոր է վճարել ապրանքի համար այն վաճառողից ստանալուց ամիջապես առաջ կամ հետո,եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով,*այլ օրենքներով*,իրավական ակտերով կամ առուվաճառքի պայմանագրով և չի բխում պարտավորության էությունից:

Այս մասնավորեցված դեպքում այլ «Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը՝«Լոտի գնի վճարումը» սահմանում է վճարման կարգ,ուստի Քաղաքացիական օրենսգիրքի 502ճրդ հոդվածը չի գործում և նրան հղում կատարելու փոխարեն դիմումատուն պետք և սնանկության գործով կառավարիչը պետք է առաջնորդվեն 18-րդ հոդվածի սահմանած կարգով,այն է՝

1.Աճուրդի մասին հրապարակային ծանուցմամբ,աճուրդի արդյունքների մասին արձանագրությամբ *կամ պայմանագրով այլ ժամկետ սահմանված չլինելու դեպքում* աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցն աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրելու օրվանից տասն օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի գինը՝հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

Դիմումին կից փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է,որ կառավարիչը և աճուրդում հաղթողը լոտի գնման գնի վճարման կարգը և ժամկետները որոշել են 10.01.2019թ-ին կնքված առանձին պայմանագրով,որը ըստ էության համապատասխանում է «Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին:

Հանձնաժողովի նախագահն առաջարկեց կարճել կարգապահական վարույթը սնանկության գործով կառավարչի կողմից կարգապահական խախտում չկատարելու պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և առարկությունները,տվեցին և ստացան համապատասխան հարցեր և արդյունքում համաձայնելով նախագահի առաջարկին:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը նույնպես համաձայնելով այդ մտքի հետ նշեց որ այնուամենայնիվ դիմումը ինքնին արդեն կասկած. է հարուցում կառավարչի կատարած գործունեությանը,չնայած այն փաստին որ կատավել է օրենքի տառին համապատասխան գործողություններ,որը չի նպաստում կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:Այդ նպատակով այս դիմում պահանջի 2-րդ կետի առաջարկի հիմքով,որպեսզի հետագայում,նաև այլ գործերում և այլ կառավարիչների գործողություններում հստակեցում, ավելի հրապարակայնություն և թափանցիկություն ապահովվելու նպատակով,առաջարկել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդին ընդունել կարգ ,եթե կառավարիչը ունի մտադրություն վճարումը տարաժամկետել,ապա այդ հնարավորության մասին տեղեկատվություն մտցնել աճուրդ հայտարարության մեջ պարտադիր կարգով: ՝

Հանձնաժողովի անդամները համակարծիք եղան առաջարկներին և քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 20.02.2019թ-ին ստացված,«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,«Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանի գործողությունների /անգործության/, գործողություն-ները օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության,նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:

Միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդին որպեսզի ընդունել կարգ հետագայում,նաև այլ գործերում և այլ կառավարիչների գործողություններում հստակեցում, ավելի հրապարակայնություն և թափանցիկություն ապահովվելու նպատակով՝եթե կառավարիչը ունի մտադրություն վճարումը տարաժամկետել,ապա այդ հնարավորության մասին տեղեկատվություն մտցնել աճուրդ հայտարարության մեջ պարտադիր կարգով:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան